ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
«ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

ՀՀ Կոտայքի մարզ, ք.Հրազդան, Մարշալ Բաղրամյան թաղամաս, Պուրակային 32, Հեռ. (+374 223) 7 30 03, էլ. փոստ
hrazdanibk@mail.ru
16.07.24 N 323

,, Ագաստ,,ՍՊԸ
Տնօրեն Գ.Մուրադյան
<<agastllc@mail.ru >>
ք. Երևան Ավանեսովի 2
ՀՎՀՀ 00435781

Ծանուցում

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ Գոհար Մուրադյան

,,Հրազդանի Բժշկական Կենտրոն ,,ՓԲԸ-ն և ,,Ագաստ,, ՍՊԸ-ի միջև 2023թ դեկտեմբերի 5-ին կնքվել է ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/0101-6 , , ծածկագրով պայմանագիր:

Համաձայն պայմանագրին կից ,, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ,, հավելված 1-ի, մատակարարման ժամկետ է սահմանվել ,, **Դեղորայքի ձեռք բերումը կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 25.12.2024թ,,** և նշվել է ****Ապրանքի մատակարարումը պետք է կատարվի պատվերի սահմաններում,, :***

,,Հրազդան ԲԿ,,ՓԲԸ-ի պատասխանատու ստորաբաժանման կողմից կատարվել են բանավոր պատվերներ, որոնք մնացել են անպատասխան: Որից հետո 04.07.2024 թ. Թիվ 304 գրությամբ է կատարվել պատվեր, որտեղ նշվել է, որ եռօրյա ժամկետում պետք է կատարվեն մատակարարումներ նշված չափաբաժիններով և քանակներով: Սակայն մատակարարում չի իրականացվել և չի տրվել հիմնավորում: Այնուհետև ,,Հրազդան ԲԿ,,ՓԲԸ 09.07.2024թ թիվ 307 գրությամբ նորից դիմել է ,,Ագաստ ,,ՍՊԸ-ին՝ կատարելու օրենքով սահմանված պարտավորությունները, միաժամանակ նշելով , որ չկատարման դեպքում կկիրառվի 04.05.2017թ թիվ 526-ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետը: Սակայն մատակարար կազմակերպության կողմից նորից պատասխան չի ստացվել:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. Մայիսի 4-ի թիվ 526-ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետի, , պայմանագրի 2.1.7 և 8.11 կետերի, ինչպես՝ նաև հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածը, 466–րդ հոդվածի 3-րդ մասը,,Հրազդան բժշկական կենտրոն,,ՓԲԸ-ն հրաժարվում է պայմանագրից, համարելով այն միակողմանի լուծված:

Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

Ծանուցման հրապարակումից հետո կկիրառվի ,,Գնումների մասին,,ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետը՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու կապակցությամբ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆ ԿԱՐԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

Կատարող՝ Լարիսա Նավասարդյան

անուն ազգանուն

(077)44-81-41